ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1964 Общественные науки

ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ

Սովետական քրդագիտությունը անդառնալի ծանր կորուստ կրեց։ Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո վախճանվեց քուրդ ականավոր գիտնական, գրող, մանկավարժ և հասարակական գործիչ՝ Ամինե Ավդալ Ավդալին։

Ամինե Ավդալը սովետական քուրդ մտավորականության այն ներկայացուցիչներից էր, որոնք իրենց անխոնջ աշխատանքով անգնահատելի ավանդ մուծեցին քուրդ ժողովրդի կուլտուրայի զարգացման մեջ։

Ա. Ավդալը ծնվել է 1906 թ. Ղարսի նահանգի Յամանչայիր գյուղում։ 1918 թ. թուրքական վայրագությունների զոհ են դառնում մանկահասակ Ամինի ծնողները և երչանիկ պատահականությամբ փրկված պատանին մինչև 1924 թ. ապաստանում է որբանոցներում։ Սովետական իշխանության հաղթանակից հետո քուրդ ժողովրդի տնտեսական և կուլտուրական զարգացման համար ստեղծված պայմանները հնարավորություն են տալիս նրան հաղթահարելու իր ուսման ծարավը։ 1924—27 թթ. Ամինե Ավդալը Թբիլիսիում ավարտում է Հայկական բանֆակը։ Հենց այս տարիներից նա մեծ եռանդով լծվում է իր ժողովրդի կուլտուրայի զարգացման, կադրերի պատրաստման աշխատանքներին։ Նա ակտիվ մասնակցություն ունեցավ Հակոբ Ղազարյանի (Լազո) կողմից ղեկավարվող քրդական դպրոցի աշխատանքների կազմակերպմանը, միաժամանակ Թբիլիսիի քուրդ ազգաբնակչության մեջ տանելով հասարակական-քաղաքական եռանդուն աշխատանք։

Բանֆակն ավարտելուց հետո Ամինե Ավդալն աշխատանքի է անցնում Ապարանի շրջանի քրդական Միրաք գյուղում, որպես դպրոցի դիրեկտոր, հանդիսանալով սովետական քուրդ առաջին մանկավարժներից մեկը մեր հանրապետությունում։ Մինչև 1932 թ. Ամինե Ավդալը մանկավարժական աշխատանք է կատարում նույն շրջանի Քարվանսարա և Ղոնդախսազ քրդական գյուղերում։

1932 թ. Երևանի պետական համալսարանում սովորելու ժամանակ Ա. Ավդալը միաժամանակ գրականություն է դասավանդում քրդական մանկավարժական տեխնիկումում։ Այդ տարիներին նա տանում էր նաև քրդական «Ռյա Թազա» թերթի պատասխանատու քարտուղարի պարտականությունները։ Մանկավարժական և լրագրային աշխատանքների հետ միաժամանակ նա գրում է գրական մի շարք ստեղծագործություններ, դառնալով սովետական քրդական գրականության հիմնադիրներից մեկը։

1945 թ. Ամինե Ավդալը հաջողությամբ պաշտպանում է դիսերտացիա և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Երկար տարիներ աշխատելով Հայաստանի պետական թանգարանում, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտում Ա. Ավդալը տալիս է գիտական մի շարք աշխատություններ, որոնք վերաբերվում են քրդական ազգագրությանը։ Նրա գրչին են պատկանում մի շարք գիտական աշխատություններ, ինչպիսիք են «Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի», «Անդրկովկասյան քրդերի կենցաղը», «Ազգակցական կապերը քրդերի մեջ», «Արյան վրիժառությունը քրդերի մեջ և նրա մնացորդները Սովետական Հայաստանում», «Սովետական Հայաստանի քրդերի կենցաղը», «Պատրոնիմիան Հայաստանի քրդերի մոտ XIX դ.» և այլ մենագիր աշխատություններ հանդիսանում են լուրջ ներդրում ոչ միայն քրդագիտության, այլ նաև սովետական ազգագրության մեջ։

1959 թ. մինչև իր կյանքի վերջը Ա. Ավդալը աշխատում է ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորի քրդագիտական բաժնում։

Սովետական քրդագիտության անխոնջ մշակ, կոմունիստ գիտնականն Ա. Ավդալի աշխատանքը բարձր է գնահատվել մեր հանրապետության գիտական հասարակայնության կողմից։ Քրդական ազգագրությանը վերաբերող նրա աշխատություններում բարձրացված գիտական մի շարք պրոբլեմների լուսաբանումը բարձր գնահատականի է արժանացել սովետական և արտասահմանյան արևելագետների կողմից։ Ամինե Ավդալը արժանացել է կառավարական մի քանի պարգևների։

Իր ժողովրդի կուլտուրայի զարգացումով ապրող, հոգատար, համեստ ու ազնիվ բնկեր Ամինե Ավդալը անջնջելի հետք թողեց սովետական քրդագիտության և քրդական գրականության զարգացման մեջ։ Նրա պայծառ հիշատակը միշտ վառ կմնա սերունդների սրտերում։